

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԵՏԱԽՈՋԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ (1918-1920 ԹԹ.)**

**Վ. 3. ԿԻՐԱՔԱՆ**

Առաջին համաշխարհային պատերազմի աշխարհաքաղաքական արդյունքները արժատապես փոփոխեցին Անդրկովկասյան տարածաշրջանի քաղաքական քարտեզը: Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղաշրջմամբ առաջ եկած ցնցումները և քաղաքական տեղատվությունները երկարատև բնույթ ունեին և իրենց ոլորտի մեջ առան գրեթե ողջ աշխարհը, այդ թվում՝ Հայաստանը: Հայկական հարցի հանգուցալուծման բոլոր հնարավոր տարբերակները մեկը մյուսի ետևից փլուզվեցին, նախկին պայմանավորվածությունները կորցրին իրենց ուժը և ազգային անկախ պետականության որոնման դժվարին ճանապարհին կանգնած ժողովուրդներին (հայեր, արաբներ և այլն) կանգնեցրին ճակատագրական երկընտրանքների և աշխարհաքաղաքական բարդությունների առաջ: Այդպիսի անբարենպաստ աշխարհաքաղաքական և դժվարագույն ռազմական կացության մեջ, երբ թուրք հրոսակները, իրականացնելով Արևմտահայաստանի հայության նախնիքը, բախում էին Արևելահայաստանի դռները, 1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը, որի անդրամիկ կառավարության լիազորությունները ստանձնած Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը ոչ միայն իրեն հռչակեց հայկական գավառների գերագույն կառավարիչ, այլև իր առաջնակարգ խնդիրներից մեկը համարեց ամեն մի պետության համար կենսականորեն կարևոր գործի՝ հետախուզության և հակահետախուզության մարմինների կազմակերպումը: Նշյալ գործընթացները բարդ էին, հակասական և ոչ միանշանակ, որոնք պայմանավորված էին տարածաշրջանում գործող աշխարհաքաղաքական ուժերի դասավորվածությամբ և նրանց միջև մղվող պայքարի ուժգնությամբ: Այս առումով կարևոր է հստակ ըմբռնել, որ պետությունն առհասարակ, նրա ինքնուրույնությունն ու քիչ թե շատ լիարժեք արտաքին քաղաքականությունը և, վերջին հաշվով, ազգային-պետական անվտանգությունն անհնարին է պատկերացնել առանց այդ անվտանգության համակարգի բաղկացուցիչը կազմող հետախուզական և հակահետախուզական գործի հիմնավոր կազմակերպման: Դիպուկ է նկատել Հայաստանի առաջին Հանրապետության հետախուզության կարկառուն դեմքերից մեկը՝ Տիգրան Դևոյանցը. «Հետախուզութիւնը պետութեան աչքն ու ականջն է: Հետախուզական բաժանմունքը խաղաղ ժամանակ կը պատրաստի պատերազմի համար եւ անդադար կուսումնասիրէ թշնամիի ուժերու դասաւորութիւնը, զօրաշարժի յատակագիծը, զօրքերու տեսակներն ու որակը, ամրութիւնները, հաղորդակցութեանց միջոցները, կապը, մթերքներն ու ռազմամթերքի պահեստները, քերքը, ժողովրդի տնտեսական եւ առողջապահական վիճակը, անոր տրամադրութիւնը, ազգութիւններու փոխյարաբերութիւնը եւ անոնց վերաբերմունքը դէպի պետութիւնը, պահեստի զորամասերը, հրամանատարներու բնաւորութիւնը, գետերու խորութիւնը տարւայ չորս եղանակներուն, անցնելիք տեղերը, նոր շինող ճանապարհները, օդակայանները եւ այլն... Մի խօսքով, հմուտ հետախուզը իր գործելակերպի եւ գործունէության մէջ ռեւէ սահման չունի, նա պետք է շարժի պահանջի եւ պայմաններու համեմատ»<sup>1</sup>:

<sup>1</sup> Տիգրան Դևոյանց, Հետախուզի մը յուշերը, Փարիզ, «Վէմ», 1938, Զ տարի, թիւ 3, լուսնասեպտեմբեր, էջ 59:

Գործելով 1918-1920 թվականների դժվարին պայմաններում՝ այդ կարևոր կառույցը կամ, ավելի ճիշտ, ստորաբաժանումը, ցավոք, չհասցրեց ժամանակի ընթացքում դառնալ լիովին ինքնուրույն ծառայություն կամ, ասենք, վարչություն, ինչպես տեղի ունեցավ այդ ժամանակաշրջանի քիչ թե շատ լուրջ ու կենսունակ որևէ պետությունում: Արխիվային բազմաբնույթ փաստաթղթերի ուսումնասիրությունից հանգում ենք այն եզրակացության, որ 1918-1920 թթ. ՀՀ կառավարությունը ձգտում էր ունենալ ոչ միայն պետականության գաղափարի ըմբռնման և կայացման տեսանկյունից կարևոր այնպիսի կառույցներ, ինչպիսիք էին բանակը, բանկը, խորհրդարանը և այլն, այլև ամեն մի պետության ազգային անվտանգությունը երաշխավորող անհրաժեշտ կառույցներ՝ հատուկ ծառայություններ (հետախուզություն և հակահետախուզություն, ներքին գործերի մարմինների ուժային համակարգ և միլիցիա), այսինքն՝ անվտանգության քիչ թե շատ լիարժեք համակարգ: Հայաստանի հանրապետության ներքին և արտաքին անվտանգության խնդիրների լուծման, հանրապետության դեմ ուղղված թշնամական գործողությունների ու սադրանքների բացահայտման ու կանխման նկատառումներից էլ ներկվ՝ 1918 թ. երկրորդ կեսին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնամուխ եղավ պետական ազգային անվտանգության համակարգի մարմինների ձևավորմանը:

1918 թ. օգոստոսի 13-ին հանրապետության Նախարարների խորհրդի նիստում լսվում է ռազմական նախարարության միջնորդությունը՝ փոխհատուցելու ավիացիայի՝ հետախուզության ռադիոհեռագրի վրա ծախսված գումարները: Նախարարների խորհուրդը, հանգամանակից քննարկելով հարցը, հավանություն է տալիս ձեռնարկված միջոցառումներին, ինչպես նաև կառավարության հատուկ վարկից հատկացնում 6 միլիոն ռուբլի. «ա) չնախատեսված ծախսերի համար հատկացնել 20 հազար ռուբլի, բ) ինչպես նաև հետախուզության համար՝ 20 հազար ռուբլի, և գ) հակահետախուզության համար՝ ևս 20 հազար ռուբլի»<sup>2</sup>: Ակնհայտ է, որ հետախուզության համար պետական գանձարանից բաց թողնվող գումարները չափազանց փոքր էին (օրինակ՝ հարևան Վրաստանը իր հետախուզության կարիքների համար հատկացնում էր անհամեմատ ավելի մեծ գումարներ):

Հետագա կազմակերպական բնույթի գործընթացներում որոշակի ջանքեր գործադրվեցին հայկական հետախուզական ծառայության և արտաքին գործոց նախարարության զանազան կառույցների միջև համագործակցության ապահովման համար, իսկ 1919 թ. ապրիլի սկզբից արտաքին գործերի նախարարությանը կից ստեղծվեց Ինֆորմացիոն բյուրո, որը պետք է ծառայեր ՀՀ ռազմական նախարարության Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի խնդիրներին<sup>3</sup>:

Քայլերը հաջորդում էին միմյանց, և հետախուզական ծառայության գործունեության կազմակերպումը ավելի ու ավելի իրական էր դառնում, իսկ վերջինիս կողմից տարվող աշխատանքները՝ ավելի արդյունավետ և գործնական: Այդ համակարգի կազմակերպումը իրականացվում էր զինվորական եղանակներով, համապատասխան կառույցների շրջանակներում:

Հաջորդ քայլերից մեկը նպատակաուղղվեց Թիֆլիսում հայկական դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական ազենտի ինստիտուտի հաստատմանը, որի մասին հարցը լսվեց Նախարարների խորհրդի 1919 թ. ապրիլի 8-ի նիստում, և կայացվեց դրական որոշում՝ հավանություն տալ ձեռնարկված քայլերին: Նախարարների խորհուրդը կարևոր համարեց Թիֆլիսի միսիային կից զինվորական ներկայացուցչություն հիմնելը<sup>4</sup>, քանզի այնտեղ արդյունավետ գործունեություն ծավալելը նշանակում էր ամրապնդել Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական դիրքերը տարածաշրջանում:

Նախարարների խորհրդի վերոհիշյալ նիստում արձանագրվեց, որ զինվորական ազենտը նշանակվում էր զինվորական և արտաքին գործերի մինիստրների փոխադարձ

<sup>2</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), Ծ.Պ-201, ց.1, գ.484, թ.9: Ծ.Պ-202, ց.1, գ.13, թ.12: Ծ.Պ-204, ց.1, գ.216, թ.1:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, Ծ.Պ- 200, ց.1, գ.155, թ.24:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, Ծ.Պ- 199, ց.1, գ.100, թ.62:

համաձայնությամբ, ընդգրկվում էր դիվանագիտական միսիայի կազմի մեջ և գործում միսիայի գլխավորի ցուցմունքների համաձայն՝ ոռնիկն ստանալով զինվորական վարկից՝ որպես զինվորական: Ըստ այդմ՝ Նախարարների խորհուրդը հանձնարարում էր արտաքին գործերի մինիստրին նախահաշիվ կազմել 9 ամսվա համար՝ 1919 թ. ապրիլի 1-ից մինչև տարվա վերջ՝ հատկացնելով 90 հազար ռուբլի Թիֆլիսի զինվորական ագենտի գրասենյակային, ներկայացուցչական և այլ ծախքերի համար<sup>5</sup>:

Անվտանգության համակարգի կայացման ճանապարհին կարևոր քայլ էր ՀՀ դիվանագիտական միսիաներին կից (ղեսպանատներ, հյուպատոսարաններ և այլն) զինվորական կցորդների ինստիտուտի ստեղծումը, որի նախահաշիվը և գործունեության կարգը 1919 թ. հունիս-հուլիս ամիսներին արդեն հաստատված էր<sup>6</sup>:

Հատուկ ծառայությունները՝ հետախուզական և հակահետախուզական մարմինները, եղել են Հայաստանի առաջին Հանրապետության ռազմաքաղաքական և, մասնավորապես, պետական անվտանգության համակարգի կարևորագույն ու անբաժան մասը՝ ստեղծվելով և կազմակերպական գործընթացներ անցնելով ՀՀ զինվորական նախարարության Գլխավոր շտաբին կից՝ որպես հետախուզական բաժանմունք: Ըստ 1919 թ. ապրիլի 14-ի Ռազմական գերատեսչության գծով հրամանագրի՝ հետախուզական բաժանմունքի անմիջական խնդիրներից էր հակառակորդի և տեղանքի մասին տեղեկատվության հավաքումը, դրանց մշակումը և ժամանակին գործերին հասցնելը, բրիգադների շտաբների կողմից հետախուզական աշխատանքի ղեկավարումը, հետախուզության համար բաց թողնվող գումարների հաշվառումը, լրտեսության դեմ պայքարի կազմակերպումը: Հետախուզական բաժանմունքը կազմակերպվում էր հատուկ գաղտնի պլանի համաձայն, որտեղ, բացի պետից և 2 օգնականից, որոնցից մեկը ղեկավարելու էր հակահետախուզությունը, կային 1 ավագ և 1 կրտսեր գրագիր<sup>7</sup>:

Այդ համակարգը հետախուզության գործի կազմակերպման կարևոր օղակ դարձավ մասնավորապես Վրաստանում, ինչ-որ չափով՝ Ադրբեջանում և Հյուսիսային Կովկասում: Հարկ է նշել նաև, որ հետախուզության և հակահետախուզության ծառայությունների կազմակերպման և դրանց աշխատանքների ուղղորդման բնագավառում զգալի վաստակ ունեն գեղապետ Մ.Մ. Զինկևիչը, Ա.Կ. Ծնետուրը, Հովան Խան-Կոտուրսկին (Հովհաննես սով), Տիգրան Դևոյանցը, կապիտան Վահագն Գալուստի Մուրադյանը, Միքայել Դոդոխյանը, ինչպես նաև Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարներ Լևոն Եվանգուլյանը, Տիգրան Բեկզադյանը, նրանց զինակիցներ, դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական ռազմական վարչության ղեկավար գեներալ Քիշմիշևը, շտաբ-կապիտան Ե. Եղիազարովը և ուրիշներ: Նրանք, սերտորեն համախմբվելով Գլխավոր շտաբի կազմում ստեղծված հետախուզական բաժանմունքի և նրա օժանդակ ստորաբաժանումների շուրջ, արդյունավետ և օգտաշատ գործունեություն ծավալեցին՝ զբաղվելով հակառակորդների վերաբերյալ տեղեկությունների հավաքմամբ, մշակմամբ և դասակարգմամբ, ղեկավարելով նաև գործերի, բրիգադների, շտաբների հետախուզական աշխատանքները, հետախուզական գործողությունների կազմակերպման ցուցումներ տալով և համապատասխան հետախուզական ամփոփագրեր ներկայացնելով ՀՀ քաղաքական ղեկավար մարմիններին՝ մինիստր-նախագահին (վարչապետին), զինվորական, ներքին և արտաքին գործերի նախարարներին: Այս ամենը հնարավորություն տվեց կանխել թշնամական մի շարք մեքենայություններ և լրտեսական գործողություններ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության անվտանգության խարխլմանը:

1919 թ. մայիսի 2-ին ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Հովան Խան-Կոտուրսկու՝ Գլխավոր շտաբի պետին ներկայացրած զեկուցագրում, ինչպես նաև զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար փոխգեղապետ

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, գ.27, թ.142-143:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, Ֆ.Պ-204, ց.1, գ.132, թ.54-55:

Ալեքսանդր Օճետրի՝ 1919 թ. մայիսի 21-ի դիմումագրում՝ ուղղված զինվորական նախարար Բրիտտափոր Արարատյանին (վերջինս զինվորական նախարարի պարտականությունները կատարել է 1919 թ. մարտի 27-ից մինչև 1920 թ. ապրիլի 3-ը<sup>9</sup>), սկզբունքային ուսման քաղաքական մոտեցումներ են առաջարկվում հետախուզական գործի կազմակերպման և նրա գործունեության արդյունավետության բարձրացման համար, մասնավորապես արտաքին գործերի նախարարության, նրա ներկայացուցչությունների (այդ թվում՝ դեսպանատներ, հյուպատոսարաններ և այլն) և հետախուզական ծառայությունների միջև սերտ համագործակցության հաստատման, արտասահմանում հայ հետախուզներին ցուցաբերվելիք աջակցության և օգնության վերաբերյալ<sup>9</sup>:

Հետախուզական ծառայության կայացման ճանապարհին պետության և կառավարության կողմից ձեռնարկված ամեն մի քայլ էական էր: Այսպես, Նախարարների խորհրդի 1919 թ. սեպտեմբերի 1-ի հիստում որոշվում է հետախուզության և հակահետախուզության գործի կազմակերպման ու ընթացիկ գործունեության համար հատկացնել 535 հազար ռուբլի և միջնորդել պառլամենտի զինվորական հանձնաժողովին՝ հաստատելու որոշումը<sup>10</sup>:

1920 թ. ապրիլի 8-ին ՀՀ նախարարների խորհուրդը, լսելով զինվորական նախարարի զեկուցումը արտասահմանում հետախուզական և հակահետախուզական գործի կազմակերպման մասին, որոշում է այդ կառույցը ենթարկել Հայաստանի Հանրապետության դեսպանների հսկողությանը<sup>11</sup>:

Անհրաժեշտ է նաև նշել, որ ստեղծման պահից սկսած Գլխավոր շտաբը զգալի աշխատանքներ կատարեց իր շուրջը փորձառու կադրերի համախմբման ուղղությամբ, որոնցից էին փոխգնդապետ, այնուհետև գնդապետ Ա. Կ. Օճետրը (Սարդարապատի հերոսամարտի ժամանակ հայկական զորքերի՝ Սարդարապատի խմբի շտաբի պետն էր, որը 1967 թ. Ֆրեզոնյում հրատարակել է այդ օրերի մասին բարձրարժեք հուշեր<sup>12</sup>), Վլադիմիր Պրիտոմանով, կապիտան Նիկոլայ Օւմովը (Գլխավոր շտաբի ընդհանուր բաժնի պետ), Միխայիլ Մեդվեդևը և ուրիշներ:

Փաստաթղթերը վկայում են, որ Գլխավոր շտաբն իր ստեղծման պահից ուներ հետևյալ բաժինները՝ ընդհանուր՝ պետ կապիտան Մ. Ի. Դվերնիցկի, օպերատիվ՝ պետ Պրիտոմանով, հետախուզական՝ պետ փոխգնդապետ Ա. Կ. Օճետր, 1919 թ. սեպտեմբերից մինչև 1920 թ. ապրիլը հետախուզության գծով բաժնի պետն էր կապիտան Վ. Գ. Մուրադյանը (անկուսակցական), 1920 թ. ապրիլից մինչև հունիսի վերջը՝ կապիտան Տ. Դևոյանցը (ՀՀԴ անդամ, որն, իր իսկ վկայությամբ, Դրոյի դասընկերն է եղել), 1920 թ. հուլիսից մինչև Հայաստանի խորհրդայնացումը (դեկտեմբերի 2-ը)՝ Մ. Դոդոխյանը: Հետախուզական բաժնի համակարգում աշխատում էին նաև պողպորուչիկ Լևոն Գեորգի Բաշինջադյանը (հանձնարարությունների գծով սպա, այնուհետև՝ հետախուզության ռեզիդենտ Վրաստանում), Արշակ Սարգսյանը (ռեզիդենտ Բաքվում), Գրիգորի Երամովը (դիտորդ Վրաստանում), Սեմյոն Հովսեփյանը (գրասենյակի և Ղամարլուում հետախուզության վարիչ) և ուրիշներ: Հակահետախուզության գործունեությունը ղեկավարում էր Նորին մեծության Ռուսինական ուսմանական գորակայանին կից Սևծովյան նավատորմի գլխավոր հրամանատարի շտաբի հետախուզության և հակահետախուզության բաժնի նախկին պետ (ադմիրալ Կոլչակին անձամբ լավ ճանաչող), ծովակալության գծով սպա Արտեմի Նիկիտայի Հովհաննեսովը՝ Հովան Խան-Կոտուրսկին, որը, գալով հայրենիք, անբասիր ճկիլով և է երկրի անվտանգության համակարգի ստեղծման աշխատանքներին<sup>13</sup>, ինչի մասին ակնհայտորեն վկայում է զինվորական նախարարի պաշտոնակատար գեներալ-մայոր Դոլոխանովի՝ օգոստոսի 7-ի հրամանագիրը (№ 14), որի հիմամբ վրա

<sup>9</sup> Տե՛ս «ՈՒՐՊԱ», 25.05.1990 թ.:

<sup>10</sup> Տե՛ս ՀԱԱ, Ծ. Պ-200, ց.1, գ.155, թ.24:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, Ծ. Պ-199, ց. 1, գ. 100, թ.194, գ.249, թ.1:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը, Ծ. Պ-201, ց.1, գ.489, թ.62: Ծ. Պ-278, ց.1, գ.11, թ.16:

<sup>13</sup> Տե՛ս «Սարդարապատի հերոսամարտը», գրեց գլխավոր Սպայակոյտի գնդապետ Ալեքսանդր Կ. Օճետր, մասնակցողի լույսեր, թարգմանեց Ա. Ամիրխան, Ֆրեզոն, 1967:

<sup>14</sup> Տե՛ս ՀԱԱ, Ծ. Պ-199, ց.1, գ.29ա, թ.215: ՀԱԱ, Ծ. Գ-91, ց.3, գ.3594, թ.2-20, Տիգրան Դևոյանց, նշվ. աշխ., «ՎԷՄ», 1938, հունվար-մայիս, թիվ 2, էջ 49:

Խան-Կոտուրսկին, օգոստոսի 5-ից սկսած, ընդգրկվում է Գլխավոր շտաբի սպայակազմում<sup>14</sup>:

Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքը ջանքեր գործադրեց նաև հետախուզության բնագավառի համար անհրաժեշտ, հնարավորինս գիտակ կադրերի ձեռքբերման և պատրաստման ուղղությամբ, որոնք տիրապետեին ֆրանսերենին, անգլերենին, թուրքերենին<sup>15</sup>: Այդ դժվարին տարիներին մույնիսկ փորձեր արվեցին ռազմական և հետախուզական կադրերի ուսուցման դասընթացներ կազմակերպել: Այս առումով հիշատակելի են հանրապետության ռազմական և հատուկ ծառայությունների ղեկավար շրջանների փորձերը՝ Ֆրանսիայում կազմակերպել զինվորական և այլ կադրերի ուսուցման և պատրաստման գործը, որի ուղղությամբ 1920 թ. աշնան սկզբին աշխատանքներ տարվեցին: Սակայն դրանք ձախողվեցին 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված թուրք-հայկական աղետալի պատերազմի պատճառով: Իսկ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի ամօթալի պայմանագիրը վերջ դրեց Հայաստանի առաջին Հանրապետության գոյությանը, որի հետևանքով լուծարվեց և դադարեց գործել նաև ՀՀ հետախուզական բաժանմունքը:

Հայաստանի առաջին Հանրապետության հետախուզության սպաները և աշխատակիցները զգալի մասնակցություն ունեցան մասնավորապես Հայաստանի մի շարք շրջաններում մահմեդական տարրերի՝ թուրք ու ադրբեջանական գործակալների դեմ մղված պայքարում: Այս առումով պետք է նշել, օրինակ, գնդապետ Զինկևիչի և այլոց դերը վրաց-հայկական 1918 թ. դեկտեմբերյան երկշաբաթյա պատերազմում, գնդապետ Ա. Կ. Օնեուրի ակտիվ մասնակցությունը 1919 թ. սկզբի՝ Նոր Բայազետի գավառի մահմեդականների խռովության ճնշման ուղղությամբ ձեռնարկված «Ջոդի» նշանավոր օպերացիայում, որը նաև հայկական բանակի և հետախուզության փոխհամագործակցության լավագույն էջերից է, ինչպես նաև Ծարուր-Նախիջևանում, Լազիստանում պորուչիկ Լուվան Խան-Կոտուրսկու գործունեությունը, 1919 թ. գարնանը կապիտան Տիգրան Դեռյանցի այցը Էրզրում, Վան և Թուրքախայաստանի մյուս կարևոր քաղաքները և այլն<sup>16</sup>: Այն, որ Հայաստանի առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները իրենց ընձեռված հնարավորությունների և առկա կադրերի շրջանակներում փորձել են առավելագույն արդյունավետությամբ աշխատել և ձգտել լավագույնս դրսևորել իրենց ունակությունները, ակնհայտ է մի շարք փաստաթղթերի անկողմնակալ և մանրագին վերլուծությունից: Սակայն, այդուհանդերձ, փաստաթղթերը վկայում են, որ հաղթահարելով ահռելի ֆինանսատեսխմկական և կադրային դժվարություններ՝ նրանք ի վիճակի չեղան լիովին դիմագրավելու Թուրքիայի, Վրաստանի, էլ չենք ասում Ռուսաստանի և մյուս մեծ տերությունների հատուկ ծառայությունների հաճախ ոչ բարեկամական, երբեմն էլ շահադիտական ու քայքայիչ քաղաքականության ու գործելակերպի հետևանքով առաջացած դժվարություններին: Ֆինանսատնտեսական դժվարությունները, կադրերի պակասը, օպերատիվ աշխատանքի փորձի բացակայությունը, նախկինում Հայաստանի նկատմամբ աշխարհաքաղաքական հետաքրքրություն ունեցող Ռուսաստանից կտրվածությունը, ազգամիջյան փոխհարաբերությունների լարվածությունը և հատկապես արևմտամետ տրամադրությունները հարվածեցին հանրապետությանը՝ ի չիք դարձնելով հայկական հետախուզության և հակահետախուզության՝ անչափ դժվարին պայմաններում ձեռք բերած արդյունքները:

Հայաստանի առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները զբաղվում էին ոչ միայն հաղորդագրությունների հավաքմամբ և ընդհանուր ինֆորմացիոն բնույթի զեկուցագրերի ու ամփոփագրերի կազմումով, այլև իրենց գործունեության դաշտի մեջ էին առել Անդրկովկասը, Ռուսաստանի հարավը, Հյուսիսային Կովկասը և, իհարկե, Թուրքիան: Տեղեկություններ էին հավաքվում ինչպես Հայաստանի ռազմաքաղաքական իրավիճակի, այնպես էլ Դեմիկիմի կամավորական բանակի, Սովետական Ռուսաստանի, բոլշևիկյան և քեմալական շարժման մասին, որոնք ներկայացվում էին ՀՀ վարչապետին, զինվորական նախարարին՝ ակնկալելով համապատասխան կարգադրություններ և

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը, Ֆ.Պ-204, ց.1, գ.40, թ.23:  
<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, գ.104, թ.61:  
<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, գ.132, թ.62:

որոշումներ՝ նպատակաուղղված Հայաստանի անվտանգության ապահովմանը: Այսպես, Գլխավոր շտաբի հետախուզական բաժինը, 1920 թ. հուլիսի 3-ին (№18) հետախուզական ամփոփագիր ներկայացնելով վերադաս զինվորական և քաղաքական մարմիններին, հաղորդում էր, որ թուրքերը Կոստանդնուպոլսում կազմակերպել են հետախուզական բյուրո, որի գործակալները պետք է աշխատեին Վրաստանի սահմանամերձ տարածքներում, հետևեին Հայաստանի իրադարձություններին: Այդ նպատակով հավաքագրվել էին հայերենին լավ տիրապետող վրացիներ և ռուսներ, որոնք մոտ ժամանակները պետք է ժամանեին Հայաստան, այդ գործի ապահովման համար Գերմանիայում տպագրել էին մեկ միլիոն կեղծ թուրքական լիրա՝ գլխավորապես Հայաստանում հայկական չեկերի կուրսը զցելու համար: Ընդգծվում էր, որ վերոհիշյալ բյուրոյի կազմում ընդգրկվել էին նաև հայեր, որոնք Երևանում և այլուր պետք է զբաղվեին կեղծ լիրաների տարածմամբ<sup>17</sup>:

Արխիվային վավերագրերի մանրագին վերլուծությունը վկայում է, որ, ապա՛ղ, մտանաբնույթ տեղեկատվությունը ոչ միշտ էր հաշվի առնվում, քանի որ քաղաքական դեկավար և մասնավորապես կուսակցական-քաղաքական իշխող վերնախավի շրջանակներում, հիմնականում 1919 թ. հունվարից մինչև 1920 թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսները, գերիշխում էին Անտանտի և փարիզյան-սևրյան որոշումների իրականացման հավատն ու հակադրվածությունը բուլշևիկյան Ռուսաստանին, որի հետ ձգտում էր բարեկամանալ Թուրքիան՝ հասնելով շոշափելի արդյունքների՝ ձևավորելով թուրք-բուլշևիկյան զինակցությունը: Որպես արդյունք՝ Հայաստանի հետախուզական ծառայության տարբեր օղակների կողմից հավաքված տեղեկատվությունը Թուրքիայի և բուլշևիկյան Ռուսաստանի զինված ուժերի վիճակի, նրանց տեղադրության, թվակազմի, ծրագրերի և այլնի մասին ոչ միշտ էին օպերատիվ և նպատակահարմար կերպով օգտագործվում ՀՀ քաղաքական դեկավար մարմինների կողմից սևրյան խանդավառության պատճառով:

Վերջ բերված փաստերը վկայում են, որ Հայաստանի առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները՝ հետախուզությունը և հակահետախուզությունը, ստեղծվել և գործել են դժվարագույն ֆինանսատնտեսական պայմաններում, ՀՀ կառավարության օգնությամբ հաղթահարել ահռելի արգելքներ՝ փորձելով հակազդել հարևան երկրներին, այդ թվում նաև Թուրքիային, որն անհամեմատ ավելի մեծ ֆինանսատնտեսական հնարավորություններ, ուժեղ բանակ և հուսալի դաշնակիցներ ուներ: Առաջին հանրապետության հետախուզությունը և հակահետախուզությունը 1918-1920 թթ. ձգտել են հնարավորինս կայանալ և իրականացնել անհրաժեշտ աշխատանքներ երկրի անվտանգության ապահովման համար՝ գործելով շատ խճճված և բարդ աշխարհաքաղաքական միջավայրում, չունենալով հուսալի և իրական դաշնակիցներ:

**В. Г. ВИРАБЯН - Система безопасности первой Республики Армения и организация армянской разведки (1918-1920 гг.).** - Спецслужбы - разведка и контрразведка - это те важнейшие структуры, без которых невозможна независимая государственность. Спецслужбы составляли неотъемлемую часть военно-политической системы первой Республики Армения, что свидетельствует о достаточной состоятельности молодого государства. Анализ материала показывает, что становление спецслужб первой Республики Армения происходило в исключительно тяжелых геополитических, финансово-экономических, кадровых и технических условиях. Между тем они должны были противостоять спецслужбам Турции, имевшей большие внутренние ресурсы, а также зримых и незримых внешних союзников. Результатом такого соотношения сил стало сокрушительное поражение Армении в турецко-армянской войне (сентябрь - октябрь 1920 г.), в которой армянские спецслужбы по объективным причинам не имели возможности противостоять турецким спецслужбам.

Сравнивая тогдашнее положение дел с теперешним, можно заключить, что третья Республика Армения находится в несравненно более благоприятных условиях и это дает ей возможность преуспеть в деле организации армянских спецслужб, опираясь при этом на опыт как первой, так и второй Республики.

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը, Ծ.Պ-200, ց.1, գ.33, թ.32: